



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
երևանյան գրասենյակ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԵԱՀԿ)
ՄԻԶԵՎ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը (այսուհետ՝
Դատախազություն) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության
կազմակերպությունը (ԵԱՀԿ)՝ ի դեմս իր երևանյան գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ),
համատեղ այսուհետ՝ Կողմեր,

նկատի ունենալով, որ ԵԱՀԿ ցանկանում է աջակցել Դատախազությանը՝ ոլորտը
կարգավորող օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու
համար և նպաստելու Դատախազության աշխատակիցների մոտ գործնական
հմտությունների խորացմանը,

հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են դատախազության և դատախազությունում
պետական ծառայության ոլորտը կարգավորող օրենսդրության բարեփոխման
գործընթացի շարունակական բնույթը՝ միջազգային չափանիշներին
համապատասխանեցնելու, թափանցիկության և հրապարակայնության ապահովման
անհրաժեշտությունից ելնելով,

ցանկանալով նպաստել օրենքի գերակայության և մարդու իրավունքների և օրինական
շահերի պաշտպանության ապահովմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Նպատակները

Սույն Հուշագրի նպատակը Դատախազությունում և դատախազության աշխատակազմում ԵԱՀԿ-ի աջակցությամբ ոլորտում առկա բարեփոխման գործընթացի ընդհանուր գնահատման և համապատասխան առաջարկությունների պատրաստումն է, որն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- ուսումնասիրել և վերլուծել 2007 թվականի փետրվարի 22-ի 'Դատախազության մասին' ՀՀ օրենքը և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերը՝ միջազգային չափանիշների և լավագույն գործելակերպի լույսի ներքո.

-գնահատել վերոհիշյալ օրենքի դրույթները և դրանց կիրառումը՝ բարեփոխումների լույսի ներքո, ինչը կնպաստի այս ոլորտը միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելուն.

-ներկայացնել ոլորտում անհրաժեշտ բարեփոխումների վերաբերյալ առաջարկություններ:

Հոդված 2

Համագործակցության ընդհանուր շրջանակը

1. ԵԱՀԿ-ն՝

1) իր կանոնակարգերի, կանոնների և ընթացակարգերի համաձայն՝ հրավիրելու է միջազգային փորձագետ՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերի գնահատումն իրականացնելու և դրանց բարեփոխման վերաբերյալ առաջարկություններ մշակելու համար,

2) ամփոփելու և ներկայացնելու է գնահատման արդյունքները Դատախազությանը՝ քննարկման և դիտողությունների համար.

3) կազմակերպելու է կլոր սեղան՝ Կողմերի մասնակցությամբ և նրանց կողմից համաձայնեցված ձևաչափով գնահատման զեկույցի նախագիծը քննարկելու վերաբերյալ.

4) թարգմանելու և հրատարակելու է վերջնական գնահատման զեկույցը:

2. Դատախազությունը՝

1) ապահովելու է գնահատման բարեհաջող իրականացման համար պահանջվող ոլորտը կարգավորող համապատասխան իրավական ակտերի և հնարավորին չափով՝ անհրաժեշտ փաստաթղթերի և այլ նյութերի մատչելիությունը.

2) ապահովելու է այցերի կազմակերպումը Դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներ և հանդիպումներ համապատասխան պաշտոնատար անձանց հետ.

3) անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի զեկույցում ներկայացված առաջարկություններին և եզրակացություններին ընթացք տալու համար և կկազմի ժամանակացույց՝ դրանց իրականացման նպատակով:

Հոդված 3

Համագործակցության և աջակցության այլ ձևեր

Կողմերը համաձայնում են, որ սույն Հուշագիրը չի բացառում համագործակցության այլ ձևերի հնարավորությունը, որոնք սահմանված չեն սույն Հուշագրում, սակայն համապատասխանում են սույն Հուշագրում սահմանված նպատակներին: Խրախուսվում է նաև համագործակցությունն այլ միջազգային կազմակերպությունների և համապատասխան շահառուների հետ:

Հոդված 4

Համագործակցության համակարգումը

Սույն Հուշագրով սահմանված համագործակցությունը համակարգում և վերահսկում են Կողմերի ղեկավար մարմինները՝ լիազորված անձանց միջոցով:

Հոդված 5

Տարաձայնությունների կարգավորումը

Մույն Հուշագրի դրույթների մեկնաբանումից կամ կիրառումից ծագող բոլոր տարաձայնությունները Կողմերի միջև կարգավորվում են բարեկամաբար, բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 6

Անձեռնմխելիությունը

Հուշագրում պարունակվող որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես ԵԱՀԿ-ի և նրա պաշտոնաստար անձանց արտոնություններից և անձեռնմխելիությունից հրաժարում:

Հոդված 7

Փոփոխություններ և լրացումներ

Մույն Հուշագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և պետք է ձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Կողմերի միջև գրավոր ծանուցումների միջոցով և կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Հոդված 8

Գովազդը և հեղինակային իրավունքները

Մույն համագործակցության արդյունքները կարող են օգտագործվել ԵԱՀԿ-ի այդ կապակցությամբ պատրաստված ցանկացած տպագիր նյութում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հրատարակումներում, ելույթներում և մամլո հաղորդագրություններում կամ համանման այլ միջոցներում:

ԵԱՀԿ-ի անվանումը և խորհրդանիշը կարող է օգտագործվել միայն Հուշագրի կապակցությամբ և ԵԱՀԿ-ի նախնական գրավոր համաձայնությամբ: Մտավոր սեփականության իրավունքները, ներառյալ գնահատականի հետ կապված հեղինակային իրավունքները, վերապահվելու են ԵԱՀԿ-ին: Դատախազությունը

շնորհելու է առանց հեղինակի պատվավճարի, անսահմանափակ և անժամկետ լիցենզիա՝ գնահատականը պատճենելու, հրատարակելու կամ որևէ այլ կերպ իր նպատակներով օգտագործելու համար:

Հոդված 9

Ուժի մեջ մտնելը և դադարեցումը

Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի երկստեք ստորագրման պահից և կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի կողմից՝ այդ մասին գրավոր ծանուցումից երեք շաբաթ անց:

Սույն Հուշագիրը ստորագրվել է Երևան քաղաքում 2011 թվականի օգոստոսի 24-ին չորս բնօրինակով, երկուսը՝ հայերեն և երկուսը՝ անգլերեն: Երկու տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանության ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Հայաստանի Հանրապետության

գլխավոր դատախազության կողմից՝

Հայաստանի Հանրապետության

գլխավոր դատախազ

Աղվան Հովսեփյան ԵԱՀԿ երևանյան

գրասենյակի կողմից՝

ԵԱՀԿ երևանյան

գրասենյակի ղեկավար

Սերգեյ Կապինոս

